4034

281. b
Ц-93

1909

2010

2011

ՀԱՇԻՒ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ Ս. ԽԱՉ ՎԱՆՔԻ ՎԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

1908 Թ.

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

506
26/I-52 Г.

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ
Տպարան Սերովբէ Աւագեանի
1909 թ.

Ա թм.
3-124a
281.6
Ն-93
1310

ՀԱՇԻՒ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ Ս. ԽԱՉ ՎԱՆՔԻ ՎԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԱՆ

1908 Թ.

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

Նոր-Նախիջեւանի Ս. Խաչ վանքի վանական կառավարութիւնը բոլորելով իր գործունէութեան առաջին տարեշրջանը, կանոնադրութեան II-րդ յօդուածի համաձայն՝ պատիւ ունի ներկայացնելու ընդհանուր ժողովի պատգամաւորներին քննութեան ու հաստատութեան 1908 թ. ել եւ մուտքի և գործունէութեան հաշիւը, ինչպէս նա եւ յիշեալ կանոնադրութեան 10-րդ յօդուածի համաձայն՝ առաջիկայ 1909 թ. ել եւ մուտքի մօտաւոր նախահաշիւը:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ
Տպարան Սերովբէ Աւագեանի
1909 թ.

44810-ան
29422-6Ͻ

ՄՈՒՏՔ

ՀԱ 19

		Ր.	Կ.	Ր.	Կ.
	Մնացորդ առ 1-ն յունուարի 1908 թ.	146	43	146	43
	Հաշուեհատութեան տարեշրջանում Ս. Խաչ վանքը ունեցել է մուտք.—				
1	Հողերի վարձ	5702	89		
2	Քարահանքի վարձ	705			
3	Բանջարանոցի վարձ	575			
4	Պարտէզի վարձ	775			
5	Ամարանոցների վարձ	608			
6	Մոմավաճառումից	642	98		
7	Եկեղեցական գանձանակ և նուէրներ .	90	61		
8	Այլ և այլք (հորթերի, չորացած ծառերի, կաթի, քարի և խճի, սառոյցի և այլ իրերի վաճառումից)	224	25		
9	Միքայէլ Նալբանդեանի և Ռափ. Պատկանեանի արձաններից մնացած գումար .	475	43	9799	16
	Փոխանցում			9945	59

ԵԼՔ

ԾԻՒ 09 թ.

		Ր.	Կ.	Ր.	Կ.
	Հաշուեհատութեան տարեշրջանում Ս. Խաչ վանքը ունեցել է ելք.—				
1	Վանքի պաշտօնեաների և ծառաների ռոճիկներ՝				
	ա. Վանահօրը	600			
	բ. Վանահօրը ի հաշիւ նրա 1906 և 1907 թ. չստացած ռոճիկների . . .	300			
	գ. Տ. Մխիթար վարդապետին Վեհափառ հայրապետի կարգադրութեամբ . .	200			
	դ. Տնտես—տիրացուին . . .	430			
	ե. Չորս մշտական և մի քանի ժամանակաւոր ծառաների	703	38		
	զ. Վանքի երգիչներին . . .	42	60		
2	Շէնքերի նորոգութեան և եկեղեցու այլ և այլ պէտքերի	116	19		
3	Մոմի և խնկի	228	20		
4	Պարտէզի և բակի մշակութեան . .	35	45		
5	Վառելիքի և լուսաւորութեան . .	287	85		
6	Սնունդ վանահօր, պաշտօնեաների, ծառաների և հիւրերի ծախք . . .	650	98		
7	Սեղանի և խոհանոցի սարքի . .	59	32		
8	Սառոյցի	35			
9	Կառքերի կարկատանի, ձիերի սարքի և պայտելու	162	18		
10	Անասունների սննունդ . . .	365	04		
	Փոխանցում	4216	19		

ՄՈՒՏՔ ՀԱ 19

		Ր.	Կ.	Ր.	Կ.
	Փոխանցում .			9945	59
	Կշիռ			9945	59

Նախագահ Վանական կառավարութեան՝
Վահան վարդապետ Տէր-Գրիգորեան

Անդամներ՝
Յովհաննէս Շապոշնիկեան
Աբգար Դերեջանեան
Յովակիմ Սագիրեան

Անդամ գործավար՝ Գ. սարկ. Զէօրէքչեան

Քննելով սոյն հաշիւները գտանք կանոնաւոր և ճիշտ։ 19 փետր. 1909 թ. Ն. Նախիջևան։

Հաշուեհեհներ՝
Յովհ. Մալխասեան
Մ. Ալլահվերդեան
Յով. Խամբուրեան

ԵԼՔ ԹԻՒ 09 թ.

		Ր.	Կ.	Ր.	Կ.
	Փոխանցում .	4216	19		
11	Կալուածական ծախքերի . . .	258			
12	Վանական կառավարութեան ծախքեր .	62	50		
13	Ձիի գնման	333	25		
14	Այլ և այլք (դեղեր և օճառ) . . .	141	17	5011	11
	Մնացորդ առ 1-ն յունուարի 1909 թ.			4934	48
	Կշիռ			9945	59

ՆԱԽԱ

ՄՈՒՏՔ 19

		Ր.	Կ.	Ր.	Կ.
	1909 թուի տարեշրջանում վանքը մօտաւորապէս պիտի ունենայ				
	ՄՈՒՏՔ				
	Տասը հազար երկու հարիւր վաթսուն և հինգ ռուբլի 41 կոպ. (10265 ռ. 41 կ.) հետևեալ աղբիւրներից.—				
1	Քարահանքից (տարեկան վարձ) . .	705			
2	Բանջարանոցից (երկրորդ կիսամեակի վարձ, այն է մինչև սոյն տարուայ սեպտեմբ. 1-ը)	250			
3	Բժիշկ Տրապիզոնցեանից՝ 131 դես. 883 ք. ս. արօտատեղու վարձ (մինչև սոյն տարուայ Սեպտեմբերի 1-ը). . . .	460			
4	Վարելահողերի երկրորդ կիսամեակի վարձը (մինչև սոյն տարուայ Սեպտեմբերի 1-ը)	3326	91		
5	Տնկարանի կապալառու Ռամից (1908 թ. երկրորդ կիսամեակի և 1909 թ. տարեկան վարձը)	1155			
6	Պարտէզից	400			
7	Ամարանոցներից	600			
8	Մոմավաճառումից	640			
9	Եկեղեցու գանձանակ և նուէրներ . .	70			
10	Այլ և այլք	100			
11	Բանջարանոցից (սոյն տարուայ Սեպտեմբերի 1-ից մինչև տարեվերջը). . .	250			
	Փոխանցում	7956	91		

ՀԱՇԻՒ

09 թ. ԵԼՔ

		Ր.	Կ.	Ր.	Կ.
	1909 թ. ընթացքում վանքը պիտի ունենայ				
	ԵԼՔ				
	Որ պիտի ծախսուի հետևեալ կերպով.—				
1	Մոմի և խնկի	229			
2	Շէնքերի նորոգութեան և եկեղեցու պէտքերի	1000			
3	Շէնքերի ապահովագրութեան . .	70			
4	Վանահօրը 1909 թ. ռոճիկ, և ի հաշիւ անցեալի	900			
5	Տնտես-տիրացուի ռոճիկ . . .	430			
6	Ծառաների ռոճիկ	660			
7	Երգիչների ծախք	70			
9	Բակի մշակութեան	60			
10	Վառելիքի և լուսաւորութեան . .	288			
11	Սնունդ վանքի ամենատեսակ ծառայողների և հիւրերի ծախք . . , .	665			
12	Վանքի և պարտէզի, սառցատան սառոյցի ծախք	70			
13	Կառքերի կարկատանի, ձիերի սարքի և պայտելու.	162			
14	Անասունների սննունդ . . .	365			
15	Կալուածական ծախքեր . . .	140			
16	Այլ և այլք	141			
	Նոր-Նախիջևանի Թեմական դպրանոցին նպաստ	700			
	Փոխանցում	5950			

ՄՈՒՏՔ ՆԱԽԱ 19

		Ր.	Կ.	Ր.	Կ.
	Փոխանցում .	7956	91		
12	Բժիշկ Տրապիզոնցեանից՝ 150 դես. արօտատեղու կիսամեայ վարձը (Սեպտ. 1-ից մինչև տարավերջը)	525			
13	Մնացեալ 131 դես. արօտատեղու կիսամեայ վարձը	327	50		
14	112 դես. վարելահողի կիսամեայ վարձը (անցեալ տարուայ գնով է հաշուած) .	1456		10,265	41
	Կշիռ			10,265	41

Նախագահ Վանական կառավարութեան՝
Վահան վարդապետ Տէր-Գրիգորեան.

Անդամներ՝ Յովհաննէս Շապոշնիկեան
Աբգար Դերեջանեան
Յովակիմ Սագիրեան

Անդամ գործավար՝ Գ. սարկ. Զէօրէքչեան.

ՀԱՇԻՒ ԵԼՔ 09 թ.

	Ր.	Կ.	Ր.	Կ.
Փոխանցում .	5950		5950	
Տարբերութիւն ելքի և մուտքի . .			4285	41
Կշիռ			10,265	41

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ներկայացնելով այս հաշիւը Պատգամաւորների ժողովին՝ Վանական Կառավարութիւնը աւելորդ չի համարում կցել նորան նաև մի քանի կարեւոր տեղեկութիւններ իւր ծագման, անցեալ տարուայ գործունէութեան եղանակի և մի քանի այլ խնդիրների մասին, որպէսզի, ինչպէս ներկայ Պատգամաւորական ժողովը, նոյնպէս նաև ամբողջ հասարակութիւնը որոշ գաղափար կազմէ վանքի ներկայ վիճակի և նորա վարիչների գործելակերպի մասին։

I. ՎԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄԸ.

1906 թուին Ս. Խաչ վանքի վանահայր Արժ. Վահան վարդապետ Տէր-Գրիգորեանը կամենալով թէ իւր գործունէութեան և թէ վանքի հաշիւների մասին տեղեկութիւն տալ ժողովրդին՝ բարւոք է համարում յիշեալ տարուայ տարեսկզբին № 2 գրութեամբ դիմել քաղաքիս Եկեղ. Հոգաբարձութեան Խորհրդարանին՝ իբրև ազգային երեսփոխանական ժողովի ընտրութիւն կրող մի հաստատութեան՝ առաջարկելով որ քննէ իւր հաշիւները։ Իսկ եթէ իրաւատէր չհամարէ իրեն այդ գործը կատարելու, գոնէ ցոյց տայ իրեն մի այլ եղանակ ինչպէս իւր ցանկութիւնը իրականացնելու, նոյնպէս նաև միջոց տալու ժողովրդին՝ մասնակցութիւն ունենալու վանքի կառավարութեան մէջ։

Եկեղեցական Հոգաբարձութեան Խորհրդարանը՝ սիրով ընդունելով Արժ. վանահօր ժամանակի ոգու համապատասխանող այն առաջարկը՝ նպատակայարմար է գտնում հաստատել Վանական Կառավարութիւն, և այս նպատակով նոյն այդ ժողովում ընտրւում է մի յանձնաժողով հ. վանահօր նախագահութեամբ Վանական Կառավարութեան կանոնագրութիւն մշակելու համար։

Յանձնաժողովի կազմած կանոնագրութիւնը Պատգամաւորների ժողովի քննութեան ենթարկուելուց յետոյ, ուղարկւում է պատշաճաւոր Հոգևոր իշխանութեան 'ի հաստատութիւն։ 1907 թ. յուլիսի 10-ին թեմիս առաջնորդ Գերապատիւ Տէր Ներսէս արքեպիսկոպոսը այս կանոնագրութիւնը հաստատում է և ուղարկում ժամանակաւոր գործադրութեան համար իբրև փորձ՝ մինչև որ Բարձրագոյն Հոգևոր իշխանութիւնը բոլոր վանքերի կառավարութեան համար ընդհանուր կանոնագրութիւն սահմանէ։

Ահա այս կանոնագրութեամբ է, որ 1908 թուի սկզբից կառավարւում է Ս. Խաչ վանքը։

II. ՎԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 1908 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ։

Վանական Կառավարութեան ներկայ կազմը 1909 թ. ընթացքում ու-

նեցել է 16 նիստ և զբաղուել է յատկապէս վանքի կալուածների շահագործութեան վերաբերեալ խնդիրներով։ Պարզ է, որ նորակազմ Վանական Կառավարութեան կալուածների շահագործութեան նկատմամբ մշակած ծրագիրները իրագործուել կարող էին այն օրից միայն, երբ նախկին կապալառուների պայմանաժամը վերջանար, որ ընդհանրապէս 1908 թ. սեպտեմբերը կարելի է համարել։

Կալուածների շահագործութեան համար Վանական Կառավարութիւնը իբրև սկզբունք ընդունել է իրեն աճուրդով տալու եղանակը՝ համարելով այն թէ վանքի համար շահաւէտ, թէ աւելի արդար միջոց իւր հանրամատչելիութեամբ և թէ վերջապէս նոյն իսկ օրէնքով պարտադիր հասարակական հաստատութիւնների կալուածների շահագործութեան համար։

Հողերը վանքի եկամտի ամենամեծ աղբիւրն են կազմում, ուստի և նոցա շահագործելու խնդիրը ամենից աւելի էլ զբաղեցրել է Վանական Կառավարութիւնը։ Վանական Կառավարութիւնը հողերի նկատմամբ չբաւականացաւ միայն աճուրդով տալու սկզբունքը ընդունելով, այլ և ցանկանալով՝ որ հողը գիւղացիութեան ձեռքը լինի՝ որոշեց մանր հաւասարաչափ վանդակների (կլէականների) բաժանել և առանձին—առանձին աճուրդի դնել, որ մատչելի լինի իւրաքանչիւր գիւղացու։ Բոլոր հողերը մասնագէտ հողաչափի ձեռքով բաժանուեցան 46 վանդակների, մօտաւորապէս 10-ական դեսեատինանոց. թէև ցանկալի էր աւելի մանր վանդակների բաժանել, բայց մեծ դժուարութիւնների հետ կապուած լինելուն պատճառով՝ Վանական Կառավարութիւնը առժամանակ անկարող եղաւ այդպէս վարուել։ Փորձը ցոյց տուաւ, որ Վանական Կառավարութիւնը իւր նպատակին հասաւ, քանի որ 1908 թ. սեպտեմբերի և հոկտեմբերի աճուրդներին բոլոր հողերն էլ գիւղացիների ձեռքն անցան։

Վանական Կառավարութիւնը՝ 'ի նկատի առնելով հողերի ներկայ արտակարգ գները, որոշեց աճուրդի դնել ոչ թէ հողերի կէսը, հետևելով ընդունած երկդաշտեան տնտեսութեան (двухпольское хозяйство) եղանակին, այլ $^2/_3$-ը, և այս հաշիւով վարելու արուած են հետևեալ վանդակները. №№ 12—22, 24—33 և 36—46, ընդամենը 290 դ. 22 ք. ս. (սոցա մէջ են նաև ըստ պլանի բանջարանոցային անուանեալ հողերը, բացի վանքին կից 10 դեսեատինանոց յատուկ բանջարանոցից). իսկ №№ 1—11, 23 34 և 35 վանդակները 131 դ. 883 ք. ս. անվար (բուրեան) են թողնուած։

Վերոյիշեալ հողերը երկու նուազ աճուրդի դրուեցան. առաջին խումբը՝ 210 դ. 2043 ք. ս. սեպտեմբերի 16-ին, որ միջին հաշիւով դեսեատինը բռնեց 24 ռ. 60 կոպ., իսկ երկրորդ խումբը՝ 76 դ. 2079 ք. ս. հոկտեմբերի 12-ին, որ միջին հաշիւով դեսեատինը բռնեց 18 ռ. 67 կոպ.։ Երկրորդ խմբի համեմատաբար աժան դնալու պատճառը ժամանակի ուշ լինելն էր, որ հետևանք էր Վանական Կառավարութեան և վանքի հողերի նախկին

կապալառու՝ բժիշկ Բաղդասար Տրապիզոնցեանի մէջ ծագած թիւրիմացութեան, որ հարթուեցաւ հոկտեմբերի մէջ՝ և որից յետոյ միայն հնարաւոր եղաւ հողերը աճուրդի դնելու:

Վանքի անվար (բուրեան) մնացած և մնալիք հողերը Վանական Կառավարութիւնը որոշեց տալ երեք տարի առանց աճուրդի նախկին կապալառու բժիշկ Տրապիզոնցեանին դեսետինը 7 ռուբլով, ինչպէս նաև №№ 34 և 35 կլէտկաները, որոնցից մէկում գտնւում են նորա շէնքերը 'ւ միւսում ջրհորը, միայն տաւար քաղցնելու համար, որի շնորհիւ կը պարարտանայ հողը և նորա արժէքը կը բարձրանայ: Վանական Կառավարութիւնը՝ հակառակ իւր սկզբունքին, այսպէս վարուեցաւ, որ հնարաւորութիւն ունենայ իր խոստումից ազատ լինել, քանի որ վճռել էր՝ յարգելով բժիշկ Տրապիզոնցեանի խնդիրը, տալ նորան 100 դեսետին հող երեք տարով 12 ռուբլով: Բայց սորանից 'ի նկատի է ունեցել և այն հանգամանքը, որ առաջարկուած վարձագինը լաւ գին է, քանի որ քաղաքային անվար հողերի կապալավարձ, ինչպէս ցոյց են տալիս քաղաքային վարչութեան 1903—1909 թ. հաշիւները, միջին հաշւով 4½ ռուբլի է եղել,

Վանական Կառավարութիւնը իւր ընդունած աճուրդով տալու սկզբունքին հակառակ է վարուել նաև՝ թողնելով վաճառական Ռամի ձեռքին փոխադարձ համաձայնութեամբ 22 դես. հող, որ դարձել է նա անկարան այն հանգամանքի պատճառով, որ նա համաձայնել է իւրաքանչիւր դեսետինին, փոխանակ 12 ռուբլու՝ տալ 35 ռուբլի, և այն 9 տարով վերցնելով հողը, որպիսի վարձագին Վանական Կառավարութիւնը այլապէս վարուելով երբէք ստանալ չէր կարողանար:

Վանական Կառավարութեան առանձին հոգատարութեան առարկայ է եղել նաև վանքի պարտէզը, որ կապալով է տրուած եղել Մարգար Բայալեանին և որի պայմանաժամը 1908 թ. դեկտեմբերին միայն լրացաւ: Պարտէզի նկատմամբ Վանական Կառ. վերջնական կազմած ծրագիր չունի, բայց ժամանակաւոր սկզբունքով որոշել է պարտէզը նորոգել մաս-մաս. կէսը նախկին եղանակով շարունակել մի քանի սահմանափակումներ դնելով կապալառուի առաջ. իսկ վերջնական վճիռ կկայացնէ այն ժամանակ, երբ ստանայ հասարակութեան կարծիքը նորա շահագործութեան եղանակի և վիճակի մասին առհասարակ, որի կարծիքը խնդրելու համար տեղական թերթի միջոցով դիմում է եղած հասարակութեան:

Վանական Կառ. հոգս է տարել նաև նախկին պարտքերը գանձելու մասին. նորան մինչև այժմ յաջողուել է քարահանքի կապալառուի հին հաշիւները մաքրել՝ ստանալով նորանից պարտքի փոխարէն 600 հատ առաջին կարգի քար:

Բանջարանոցի նախկին կապալառու Ցիմբերգը, որի պայմանաժամը լրացաւ 1908 թ. դեկտեմբերին և բանջարանոցը աճուրդից ուրիշը վերցրեց, պարտք է վանքին նախկին տարիներից 395 ռ., որպիսի գումարի համար իբրև ապահովութիւն առել է վանքին 500 ռուբլու մուրհակ (բլանկ վէկսել): Վանական Կառ. որոշել է գործը դատի տալ, եթէ նշանակուած ժամանակին չստանայ փողը: Վերջապէս ամենից մեծ պարտապանը պարտէզի կապալառու Մարգար Բայալեանն է, որ պարտք է վանքին 3465 ռ. և որը գլխաւորապէս բարդուել է կալուածները տէրութեան ձեռքում եղած շրջանում: Այս գումարի համար վանքը ունի 700 ռուբլու մուրհակ (բլանկ վէկսել): Վանական Կառ. որոշեց այս խնդրի վերջնական լուծումը Պատգամաւորներից Ընդհանուր Ժողովին թողնել, որին պատիւ կունենայ բերանացի հաղորդել նաև իւր խորհրդածութիւնները, որ ինչ-ինչ պատճառներով անյարմար համարուեցաւ գրաւոր ներկայացնել:

Ի վերջոյ Վանական Կառ. նայելով վանքի վրայ՝ իբրև ազգային լուսաւորութեան ծառայող հաստատութեան, յարգելով տեղիս Թեմական դպրանոցի Հոգաբարձութեան խնդիրը՝ որոշեց մի տարով միայն նպաստ տալ 700 ռուբլի, որ մտած է առաջիկայ տարուայ նախահաշուի մէջ:

III. ՎԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՅՔԸ 1908 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ.

Վանական կառավարութեան կայքը կազմում են գլխաւորապէս վանքի կալուածները։ Վանքը ունի ընդամենը 487 դեսեատին 1480 ք. ս. հող, "բից գործածական է 469 դ. 459 ք. ս. և անգործածական՝ 19 դ. 1021 ք. ս.։ Հողերի ընաւորութեան մասին գաղափար տալու համար դնենք նորա պատկերը ըստ տեսակի,

1) Վարելահող . . . . 413 դ. 1925 ք. ս.
2) Վանքը իւր բակի շէնքերով և նրա կից պարտէզն ու բանջարանոցը . . 37 դ. 2212 ք. ս.
3) Արօտատեղի . , . 17 դ. 1122 ք. ս.
4) Քարհանք . . . 7 դ. 696 ք. ս.
5) Ճանապարհներ . . . 5 դ. 1200 ք. ս.
6) Ջրեր . . . . 5 դ. 1515 ք. ս.

IV. ՎԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅ ԿԱԶՄԸ.

Վանական կառավարութեան ներկայ անդրանիկ կազմը հաստատուած է իւր պաշտօնի մէջ թեմիս Գերապատիւ Առաջնորդից 1907 թ. դեկտեմբերի 12-ին եռամեայ ժամանակով և կազմուած հետեւեալ անձերից.

1) Տէր Վահան վարդ. Տէր-Գրիգորեան—Վանահայր նախագահ Վանակ. Կառ.
2) Շապշնիկեան Յովհաննէս—Անդամ Վանական Կառ. և գանձապահ։
3) Սագիրեան Յովակիմ—Անդամ Վանական Կառավարութեան։
4) Դերեջանեան Աբգար—Անդամ Վանական Կառավարութեան։
5) Գէորգ սարկաւագ Զէօրէքչեան—Անդամ Վանական Կառ. և գործավար։
6) Խաչատրեան Յովհաննէս—Անձնափոխանորդ։
7) Տէր-Գրիգորեան Պօղոս—Անձնափոխանորդ։
8) Ալլահվերդեան Մանուկ—Հաշուատես։
9) Խամբուրեան Յովակիմ—Հաշուատես։
10) Մալխասեան Յովհաննէս—Հաշուատես։

Նախագահ Վան. Կառ.՝ Վահան վարդապետ Տէր-Գրիգորեան.

Անդամներ՝
Յ. Շապշնիկեան
Յ. Սագիրեան
Ա. Դերեջանեան

Անդամ-Գործավար՝ Գէորգ սարկ. Զէօրէքչեան։



H APM 3-12

8 V

4034

NL0031181

3-124a

3908